## ՆԱՄԱԿ ՍՈՒՐԱՄԻՑ

—

18-ին հոկտեմբերի

Սուրամում վաղուց զգալի էր օրիորդաց ուսումնարանի հարկաւորութիւնը, բայց թէ նիւթական միջոցները և թէ ուրիշ շատ մանր պատճառներ միշտ արգելք էին լինում այդ ամենաանհրաժեշտ հիմնարկութեան իրագործմանը: Բայց ընդհանուր համակրութիւնը և համերաշխ գործունէութիւնը ի՞նչեր չեն կարող գլուխ բերել:

Ամսոյս 4-ին այստեղ բացվեցաւ հայ օրիորդաց ուսումնարան արժ. տէր-Յովսէփ ռիւծեանի և մեծ. Թիմ. վերատեսուչ պ. Բարխուդարեանի աշխատութեամբ: Գովելի է արժ. հօր գործունէութիւնը, որ մոռանալով հին խռովութիւնները, այժմ ամենայն սիրով ու եռանդով աշխատում է ու գործում յօգուտ Սուրամի երկսեռ ուսումնարանների:

Ամսոյս 3-ին, կիրակի օրը, գիւղական համեստ հանդէսով օրհնվեցաւ եկեղեցու գաւթում նոր կառուցած օրիորդաց ուսումնարանը: Գիւղական մաքուր և պարզ եկեղեցում, ս. պատարագին ներկայ գտնվող հայ բազմութիւնը, աշակերտների ու աշակերտուհիների միակերպ հագուստը, իրանց ուսուցիչներով մի հիանալի տպաւորութիւն էին գործում ամենի վրա:

Ս. Պատարագը վերջանալուց յետոյ արժ. տէր-Յովսէփ Առիւծեանը բոլորին հասկանալի վրացերէն լեզուով մի քանի խօսք ասաց, բացատրելով ժողովրդեան այդ ուսումնարանի նշանակութիւնը և նրանից ըսպասելի բարոյական և նիւթական օգուտները: Տէր-հայրը հետևեալ բառերով վերջացրեց իր խօսքը. «իմ դէպի ձեզ ունեցած մի բարոյական պարտքս էլ հատուցի. գիտէ՞ք, այս օրը կեանքիս երջանկութեան ամենաքաղցր օրերիցն է: Իմ միակ ցանկութիւնս էր, գոնէ խորին ծերութեանս հասակում, տեսնել ձեր զաւակներին մայրենի լեզուով խօսելիս. ուրեմն եթէ սիրում էք ձեր ս. կրօնը, ձեր ազգը և ձեր լեզուն, աղաչում եմ, օգնեցէք ինձ, աշխատենք միասին առաջ տանելու, ծաղկեցնելու մեր նորաբաց ուսումնարանները հայ հոգւով, ապա թէ ոչ ձեզ հայ համարելու չէ ոչ ոք»: Յետոյ եկեղեցում բոլոր ներկայ եղողները մտան ուսումնարանի դահլիճը, ուր եկեղեցական դասը երգեց շարականներ և կատարեց մաղթանքներ. վերջը աշակերտները երգեցին մի քանի ազգային երգեր և ժողովուրդը ուրախութեամբ ցրվեցաւ:

Միւս օրը հաւաքվեցան 35 աշակերտուհիներ. ընդունելութիւնը շարունակվում է մինչև նոյեմբերի մէկը: Յաւում ենք, որ ուսումնարանը 40-ից աւելի աշակերտուհի չէ կարող ընդունել:

Այժմ Սուրամի երկսեռ ուսումնարաններում սովորում են 70 երկսեռ աշակերտներ: Ուսանում են հայերէն, կրօն, ռուսերէն, թուաբանութիւն, նկար. ուսում, երգեցողութիւն, հ. և ռ. փայլըչագրութիւն, վրացերէն և ձեռագործ օրիորդաց ուսումնարանում: Դպրոցները ունեն երեք ուսուցիչ և մի վարժուհի:

Այս կողմերում հացի և այլ կենսական պիտոյքների թանգութիւնը դեռ շարունակվում է: Թէև այս տարի սիմինդրի մեծ առատութիւն էր, բայց ամենևին չօգնեց հացի էժանանալուն, որովհետև մանր չարչիները հէնց տեղը՝ գիւղացու ձեռին այն գնովն են տալիս, ինչ գնով գուցէ նրանք չը կարողանային Թիֆլիսումը ծախել: Այսպէս հասարակ ալիւրի պուդը այսօր ծախվում է 1 ր. 80 կ.,—2 ր. իսկ Թխած հացի փութը 6 կ., սիմինդրը 80 կ.—1 ր. 10 կ., գարին 1 ր., մսի փութը 10 կ., պանիրը 25 կ., իւղը 60 կ., 5 հատ ձու 10 կ., կաթը այն ևս ջրախառն բաժակը 5 կ., մի հաւը 80 կ., վարիկը 40 կ., մինչև անգամ լոբին թանգացաւ, այժմ ծախվում է պուդը 1 ր. 60 կ., իսկ փայտը, որ ծախվում էր մեծ սայլը 80 կ. այժմ ծախվում է 4 ր.—4 ր. 50 կ.: Շատ պարզ է որ այսպիսի թանգութիւնը անտանելի է ժողովրդի համար, և յոյս էլ չը կայ, որ այսուհետև էժանանայ, որովհետև գիւղացին մէկ ու մէկ սովորեցաւ իր մթերքները թանգ գնով ծախել:

Այստեղ ցրտերը սկսվեցան. մօտիկ սարերի վրա ձիւն է գրած:

Վ.

## ՆԱՄԱԿ ՎԼԱԴԻԿԱՎԿԱՍԻՑ

—

Նոյեմբերի 6-ին

Երկար ժամանակէ ի վեր տանջվելով սրտի թաղանթի ընդլայնման հիւանդութեամբ, (порокъ сердца) հարկ եղաւ ինձ դիմել այս և այլ հմուտ բժշկաց խորհուրդներին, որոնց և առաջարկած բազմապիսի դարմանները, ընդունելով չը գտայ գոնէ թեթև դիւրութիւն իմ՝ տաժանագին և մաշող ախտին, բայց երբ հանգամանաց բերմամբ պատահեցայ Եղիշէ վարժապետ Մեծատունեանցին և պատմեցի իմ ցաւիս մանրամասնութիւնքը, նա ինձ առաջարկեց օգուտ քաղել իր ձեռագիր բժշկարանի միջոցներէն: Եւ արդարև նրա հաբերը (пилюли) և տուած հեղանիւթերը, բոլորովին բուժեցին իմ ախտը, որ ես հրապարակաւ իմ անկեղծ շնորհակալութիւնս յայտնելէն յետոյ, պարտք կը համարիմ սրբազան ձեր «Մշակ» ազգալոյս լրագրի միջոցաւ հրատարակել 'ի լուր ընդհանրութեան, և խորհուրդ կը տամ որպէս զի ամենայն ոք, որ կը կրէ այդ հիւանդութեան տեսակը իր վրա, կարողանայ անխար դիմել յարգոյ Մեծատունեանցին և կատարեալ առողջութիւն սպասել նրա տուած միջոցներէն:

Գասպար Խաչատուրեանց

## ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են հետևեալը. Վաղարշապատից „Մշակին“ հաղորդած այն լուրը իբր թէ պ. Եզեանը հրաւիրված է Էջմիածնի ճեմարանի տեսուչ՝ հիմնովին սխալ է:

—

Մեզ գրում են ԵՐԵՒԱՆԻՑ. „Հոկտեմբերի 19-ին տեղիս բարձրակարգ ռուս ծառայողները տուեցին մի կօնցերտ բարեգործական նպատակով Գայեանեան դպրոցի դահլիճում: Կօնցերտին մասնակցում էին՝ փոխ-նահանգապետի պ. Չեխովսկու կինը, տիկին Ֆօնդէրնօնէ, օրիորդ Թ. Մէլիք-Աղամալեան և պ. Նեզմիրով: Տիկինները և օրիորդը պիանօի վրա ածեցին, իսկ պ. Նեզմիրով ջութակի վրա: Դահլիճը լի էր ռուս հասարակութեամբ. Նոյն սիրողները տալու են շուտով մի երկրորդ կօնցերտ յօգուտ Գայեանեան օրիորդաց դպրոցի“

—

Մեզ գրում են ԻԳԴԻՐԻՑ որ այդտեղի ամբողջ հայ հասարակութիւնը շատ գոհ է օրիորդաց դպրոցի վարժուհի Աննա Աստապատեանցի անցեալ տարվայ աշխատութիւնից և շնորհակալութիւն են յայտնում նրան հրապարակաւ:

—

«Մշակի» մէջ տպված պ. Կրօսի նամակից տեղեկացանք որ Թիֆլիսի հայոց մշտական թատրոնական խմբի դերասան պ. Մնակեան թողել էր Թիֆլիս. Բայց երևում է որ պարոնը կրկին վերադարձել է մեր քաղաքը, որովհետև կրկին մասնակցում է հայոց թատրոնական ներկայացումներին:

—

«Մշակի» այս տարվայ բաժանորդների վրա մնացին մեծ ապառիկներ. խնդրում ենք մեր բաժանորդներին շուտով վճարել խմբագրութեանը իրանց պարտքը. Դժուար է հրատարակել մի ամենօրեայ թերթ, երբ բացի սովորական դէֆիցիտից, ապառիկներ էլ պէտք է ունենանք:

—

ՄՕՍԿՎԱՅԻՑ մեզ գրում են. Պատուելի էնտոմոլոգ Լինդէմանը, Պէտրովսկայա Ակադեմիայի պրոֆեսորը, յայտնել է իր պատրաստակամութիւնը մի հայ ուսանողին զննել այն բոլոր միջատները, որոնք կուղարկվեն Կովկասից մեր կալուածատէրերից: Նա խոստանում է նաև առաջարկել այն վնասակար միջատների ջնջելու միջոցները, որ հարկաւոր կը գտնի: Յոյս ունենք, որ մեր կալուածատէրերը ուշադրութիւն կը դարձնեն սրա վրա և ուրախութեամբ կընդունեն այս համակրելի առաջարկութիւնը: Յայտնում ենք մեր խորին շնորհակալութիւնը պ. պրոֆեսորին: Ինչպէս լսել ենք, վերոյիշեալ պրոֆեսորը դիտաւորութիւն ունի առաջիկայ ամառը ճանապարհորդելու Կովկասի այս և այլ տեղերում գիտնական նպատակով:

—

Նոյն տեղից մեզ հաղորդում են հետևեալ անցքի մասին, որը անկասկած պատիւ չը պէտք է բերի մեր հայ-վաճառականներին: Այստեղ մի քանի հայ-վաճառականներ մտնում են մի կանդիտէրի մօտ, նստում են սեղանի չուրջը, պահանջում են շօկօլադ և հրաւիրում են, ի հարկէ, իբրև հիւրասէր հայեր, նոյն իսկ կանդիտէրին: Սրանից մէկը ասում է կանդիտէրին, որ նա ուզում է զանազան տեսակ պիրօժներից գնել, ուստի խնդրում է նրանից, որ ամեն տեսակներից նմուշները բերի: Կանդիտէրը ուրախութեամբ կատարում է և նրան գրաւելու համար աշխատում է որքան կարելի է շատ բերել: Մեր պատուելի պարոնները, լաւ կշտանալով նմուշներով, վեր են կենում տեղից և այդ խնջոյքի ինիցիատորը (որը, ի հարկէ նմուշների համար փող չէ տալի) խնդրում է կանդիտէրին, որ ամեն օր առաւօտեան այսքան գրվանքայ այս ինչ տեսակներից ուղարկի նրան այսինչ հիւրանոց՝ հետևեալ հասցէով. «Կիրակոս Մարկոսեան Ցիրացուեանց»: Կանդիտէրը կատարում է խնդիրքը, բայց... կանդիտէրի ծառան, որ բերում է պատուիրածը, յիշեալ պարոնին նշանակած հիւրանոցում չէ գտնում. հասցէն կեղծ է եղել: Առաւել ևս ցաւալին այն է, որ այդ պարոնները չեն ամաչում ուրիշներին պատմել թէ ինչ գեղեցիկ օյին են խաղացել կանդիտէրի գլխին:

# ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

## ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Սալմաստ, 21 հոկտեմբերի

Այս ամսի 12-ին պարսից զօրապետ Թեյմուր-աղան կրկին վերադարձաւ Սալմաստ 8000 զօրքով, որոնց քիչը կանօնաւոր, իսկ շատը անկանօն զօրքեր էին, երեք բաժինը պարսիկներ, իսկ մնացածը միլանցի ու ճալալցի քրդեր էին, ունէին իրանց հետ 6 թնդանօթ ու 146 բեռ վառօդ:

Շեյխ-Իբադուլլահը Ուրմի պաշարել է, բայց դեռ քաղաքը չէ մտած: Ուրմու զօրապետը, որին անուանում են Իղբալը-Դօվլէ, այսինքն պետութեան բաղդ, դա Ուրմի քաղաքի մօտ մի այգի ունի, որին պարսկերէն բառով Դիլկուշատ են անուանում, որ ասել է սիրտ ուրախանալու տեղ. այդ այգու մեծութիւնը մի քանի քառակուսի մղոնչափ է և իւրաքանչիւր տարի ահագին եկամուտ ունի: Այդ այգին քաղաքէն 10 բոպէ հեռաւորութիւն ունի, որը գեղեցկաշէն պալատներով զարդարված է, Շեյխը այդ տեղ իջևան արել է, իսկ Իղբալը-Դօվլան Շեյխի այդ տեղ իջևան անելը լսելուն պէս, իսկոյն կը հրամայէ թնդանօթաձիգ զօրաց, որ իրանց թնդանօթները դէպի այդ այգին ուղղեն ու երկու ժամվան մէջ ամբողջ այգին աւերակ դառել է: Այժմ Շեյխը այդ տեղից հեռացել է, բայց քաղաքից դուրս գտնվող բոլոր գիւղերը կողոպտել ու քարուքանդ է արել, մանաւանդ հայոց ու ասորոց գիւղօրայքը:

Թեյմուր-աղան ամսոյս 16-ին տեղիցս դուրս եկաւ դէպի Ուրմի. դեռ չը գնացած զօրա հետ եկող միլանցի քիւրդերը մեր գիւղը հիւր ուղարկած էին բանակէն, ինչպէս միւս գիւղօրայքներ: Այս քիւրդերի թիւը մեր տանուտէրի ցուցակին նայելով 142 մարդ ու 163 ձի էր, թէև երկու օր մնացին, բայց կարող եմ ասել, որ մի տարվայ վնասներ տուին. ինչ որ կամենում էին՝ բռնութեամբ պահանջումէին, վերջապէս ամենայնեան աղքատ տունը 30 րուբլի վնաս ունեցաւ, ընթերցողը կարող է հարուստները բաղդատել: Նուաստս մի ժամանակին ձի ունէի, որ հազիւ նորանով դէս ու դէն գնում էի լուրեր քաղելու ու ձեր ազգօգուտ խմբագրութեան հաղորդելու, բայց նա ալ դժբաղդաբար գիւղի մէջում ձեռքիցս խլեցին:

Դավրիժ քաղաքի անգլիացւոց հիւպատոսը, ով գիտէ ինչ նպատակով մի ամիս է, որ Ուրմիումն է. կասեն, թէ Շեյխը հիւպատոսին մի նամակ ուղարկած է, որի մէջ յայտնել է հիւպատոսին, որ քաղաքում իր բնակված տան վրա մի դրօշակ բարձրացնէ ու իր մարդկերանցը առանձին նշաններ տայ, որ երբ ինքը քաղաքի վրա յարձակվի, նրա տունը և մարդիկը անվնաս մնան: Այդ նամակի հետ մի առանձին նամակ էլ քաղաքի պարսիկներին գրված է Շեյխ կողմից, թէ ես կամենում եմ ձեր մայր մզկիթ ներսը մինի միջում իմ օրէնքով հանդէս մը կատարել. իսկ քաղաքացի պարսիկները բոլորովին մերժում են և իսկոյն թնդանօթները քաղաքի պարիսպներու վրա զետեղելով, 12,000 հրացանաձիգ հասարակութեամբ պաշտպանում են քաղաքը:

Շեյխը՝ այս օրերը քաղաքը մտնող բոլոր ջրերը կտրել է. թէև քաղաքի մէջ խմելու ջրեր շատ կան, բայց ջրաղաց բանեցնելու ջրեր չը կան. այդ ջրերը կտրվելէն մինչև հիմայ քաղաքի ջրաղացները իրանց չըջանները դադրեցուցած են. կասկած չը կայ, որ եթէ այդպէս մնայ, քաղաքումը հացի նեղութիւն պիտի լինի:

Թեյմուր-աղան սաստկութեամբ է զօրք պահանջում հայերից, բայց տեղոյս վիճակաւոր առաջնորդ գեր. Գրիգոր եպիսկոպոս Մուշեղեանը, պարսից բանակը մի նամակ ուղարկեց առ Թէյմուր-աղան, և յայտնեց, թէ հայերը հազիւ կը կարողանան իրանց գերդաստանը պաշտպանել աւազակաբարոյ մարդկանցից, եթէ նոցա տղամարդերը պատերազմ գնան, դուք ինձ կերաշխաւորէ՞ք, որ նրանց գերդաստանները ապահով կը մնան: Այս պատասխանով գործը դադրեցաւ և սրբազանը նոյնպէս պատասխան ստացաւ, որ հայերը թող իրանց պաշտպանեն:

Վերջապէս, տեղս որքան արիւնարբու ու աւազակաբարոյ մարդիկ կային, բոլորը մէկանց կամաւոր զօրք ու ձիաւոր նշանակված են, ու մեծ վնասներ տալիս են հայերուն. բռնութեամբ մտնում են տները և իրանց կամեցածը վեր են առնում, գնում են, մանաւանդ այն տները, որտեղ գտնվում է մի Համրի Մարտինի հրացան, կամ մի լաւ ձի: Ոչ մի հայու մօտ ձի չը թողին, բոլորը բռնութեամբ տարան, նմանապէս գիւղացոց սայլերը բոլորը լծեցին ու պատերազմի առարկաներով լցրին, ծրխարար դէպի Ուրմի քշեցին, միով բանիւ, տեղական հայերը մեծ վտանգի մէջ են՝ և ամեն գիշեր մէկ գիւղ կողոպտում են և շատ մարդասպանութիւններ 'ի գործ դնում են. հայոց համար երբէք մի բոպէ հանգստութիւն չը կայ:

Յոյս ունենք, որ մեր այս տխուր նամակը երբ կը կարդայ Վեհափառ կաթուղիկոսը, անկասկած, ուր հարկն է կը բողոքէ պարսկահայոց վնասների և ապահովութեան համար:

***

## «ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

**ԼՕՆԴՕՆ**, 8 նոյեմբերի: Մինիստրների խորհուրդը թագուհու նախագահութեամբ վճռեց յետաձգել պարլամենտի նիստերը մինչև դեկտեմբերի 2-ը:

**Կ. ՊՕԼԻՍ**, 8 նոյեմբերի: Ասում են, որ Դերվիշ-փաշայի զօրքերը շրջապատված են ալբանացիներից: Դերվիշ-փաշա օգնական զօրքեր պահանջեց: Գօշեն յայտնեց սուլթանին, որ Եւրոպան տասն օրից աւելի չի սպասի Դուլցինիօի խնդրի վճռելուն: Աւստրիական հիւպատոսարանը Պրիզրենդի մէջ կողոպտված է:

**Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ**, 8 նոյեմբերի: «Правит. Вѣстн.» լրագրին հեռագրում են Լիվադիայից. Թագաժառանգը և Թագաժառանգուհին իրանց երեխաներով կէս գիշերին „Էրիկլիկ“ նաւով ուղևորվեցին Ս. Պետերբուրգ: Ճանապարհին այցելեցին Ինկերման և Ինկերմանի վանքը:

**Կ. ՊՕԼԻՍ**, 8 նոյեմբերի: Պետութիւնների միաձայն դիտողութեանը Կումեռայի սպանողի պատժի մասին Բ. Դուռը պատասխանեց, որ Վէլի-Մահմեդի մահուան պատիժը փոխարինված է մշտական բանտարկութեամբ:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ